

(= ԻԲ) : Թ (95) Բժիշկը (= Ի) : Ժ (96) Դատատան : ԺԱ (97) Յաղագս օրիւնաց (= ԺԷ) : ԺԲ (98) Անասկոչքիւն (= ԺԸ) : ԺԳ (99) Նախախնամոչքիւն (ԻԳ) : ԺԴ (100) Յաղագս պահպանոչքեան ընկից (= Ձ) : ԺԵ (103) Սէր ընկից և աղքատոչքիւն (= Է) : ԺԶ (106) Արբեցոչքիւն (= ԺԳ) : ԺԷ (108) Պատիւ ծընողաց (= ԺԵ) : ԺԸ (109) Բամբասանք (= ԺԹ (110) Քաջագոչքիւն և վատագոչքիւն (= Ժ) : Ի (112) Լսոչքիւն (=

ԺԱ) : ԻԱ (115) Դատատան : ԻԲ (165) Փառք (= Ը) : ԻԳ (117) Մահ (= Թ) : ԻԴ (120) Կին (= ԻԴ) : ԻԵ (122) Պարկեշտ կանայք : ԻԶ (123) Բարեխառնոչքիւն :  
 Համրանքի առնելով, 203 վճռական խօսք կը գտնենք. բայց որովհետեւ վեներական տպագրին մէջ բաժնուած ու տունց անուան հեղինակի, միացած են յոկանեանն, ու իմաստափրաց մէկուն ընծայուած, ճիշտ թիւը գտնելու համար՝ քիչ մը աշխատանք հարկաւոր է, զոր վեռ չեմ՝ ըրած <sup>1</sup> :



## ԳԵՂԱՐՈՒԵՍՔ

ԵՆՐԻԿՈՅ ԲԱՐԲԵՐԻ (BARBERI) ԲՈԼՈՆԻԱՑԻ ԻՏԱԼ ՔԱՆԿԱԿԱԳՈՐԾ



Այս եղանակը քանակագործին վրայօք՝ իր համագրին թովմաս Տոգզի՝ այսպէս գրէ .

Ինչ ի զուր կը թուի ժխտել՝ թէ քամանակէ մ'ի վեր արուեստի քըննորթ թիւնն շարունակ յետ կ'երթայ և կ'անկանի իւր բարձրութենէն : Պատճառն յայտնի է . այսօրուան օրս հրապարակի վրայ կը գեռան այնպիսի գրիչք, որ քանի մի տողով թուղթը միտտել գիտնալով, իրաւունք ստացած կը համարին թէ կարող են որ է գործ դատել և վճիռ հատանել՝ նկարի մի կամ արձանի մասին, գուցէ հաւանօրէն առանց իսկ գիտնալով թէ յորում կը կայանայ նկարչութեան կամ քանդակի ազատ ու գեղեցիկ արուեստն : Դարձեալ այս անկամանս իբր երկրորդ պատճառ մ'այլ են՝ այն կեղծ ու չահախնդի անձինք, որ տակաւ սկսան ամէն տեղ յերեւան հինել՝ հոչակելու միայն այն անձանց

գործերը, որոց համբան իրենց այլ չահարեր լինելով՝ ի հարկէ կարեւոր կը դատին զանոնք ինկել . մանաւանդ թէ յաճախ այս նպատակաւ իրենց խժրժանաց ու զրախօսութեան նիւթ ընել՝ նաեւ այն հմուտ և համեստ անձանց գործերն, որք ամփոփուած իրենց գործին կը զբաղին մտադիր, առանց ամենեւին խորհելու շողջորթ մտնետիկ մ'որսալ :

Այս վերջնոց ազնուական դասուն

1. Հիշելու կը երկու տպագրին մէջ գտնուած տարբերութիւններն ու բնագրին պլաշտութիւնները նշանակելով, իրաւացի փոփոք մը կը յայտնէ որ զբազարաց ամենու ըսողագրութեամբ նոր հաւաքմունք մը պատրաստուի ու տպագրութեամբ հրատարակուի : Ազնիւ նպագներն այս փոփոքը կը շանտը մտաւոր գործագրել :

կը վերաբերի և մեր Բողոնիացի քանդակագործն՝ Ենրիկոյ Բարբերի, որոյ մտաց մէջ պայծառ կը ճառագայթէ սիրած արուեստին բարձր և յստակ գաղափարն, ունելով ուժեղ և ազնուական ճարտարի ամենայն ձիրք: Սորա մասին սակաւ ինչ տեղեկութիւն տալ կը գիտեմ՝ ճշմարտասէր սրտի թելագրութեան համեմատ:



Ենրիկոյ Բարբերի.

Սա, ինչպէս ըսինք, բոլորովին հեռի ըլլալով համբաւատենչ և փառախնդիր հնարից, իւր անունն տակաւին համբաւոյ թեւոց վրայ տարածուած չէ՝ իտալական թերակղզոյն վրայ, և չէ ստացած անպատշաճ հռչակի մի յաղթական ուխտանայն: Սակայն իւր գործունէութիւնն արդէն վաղուց դրոշմած է արուեստի ասպարիսին մէջ ընդարձակ և հաստատ նշանագրեր, որոց այսուհետեւ սակաւ յոյժ կրնան վաստել գիւրայարոյց թշնամեաց նախանձաշուփ խարտոցք:

Հօս աւելորդ չեմ համարիր մէջ բերել իւր առ իս ուղղած ազնիւ պատասխանը, մինչ ես կը խնդրէի իրմէ իւր գործերէն ոմանց լուսանկարը,

որք յետոյ յօգուածս զարդարող փորագրութեանց իբրև պատճէն ծառայեցին:

Գուք առանց դժուարութեան կը տեսնէք, որ իմ տաղանդիս համեմատ չէ ձեր այդ հրապարակելու իղծն. եւ ես ստիպուեցայ խորհրդածել թէ ով որ ձեր յօգուածն ընթեռնու կամ նկարքը տեսնէ, պիտի համարի՞ թէ ես ամենայն մասամբ յայլմ ձեզ գործակցած եմ, փափագելով այդ հրատարակութեան: Սիրելի բարեկամս, զայս եւս ի սրտէ կը յաւելում, զի թէ յի՛ փանաքութեամբս հանդերձ յարուեստիս, տակաւին ինչ ինչ լաւ բան կը գտնուէր, ես ըստ ամենայնի զանոնք իբրու շնորհ մի կը համարիմ առանձնասէր կենացս, ուր կ'աշխատիմ սիրով եւ կուռելով արուեստի մեծամեծ դժուարութեանց դէմ, յուսալով եւ խնդրելով յայս դիցուհւոյն ժպիտ մի՛ կամ թէ ըսել յաջողութիւն: Արդ թող տալով հրապարակել այն սակաւ արդիւնքս զոր ցարդ կրցած եմ ունենալ, ինձ կը թուի կուրուսանել այն միակ յատկութիւնը՝ որ գուցէ զիս յայլոց կ'սրոշէր:

— Այս տողերէն ամենայն որ կըրնայ ըմբռնել ճարտարիս համեստութեան չափը:

Ճշգրտահանութեան (verisme) գրութեան, որոյ մասին այսօր յաճախ կը լսեմք խօսիլ կամ թէ լաւ եւս՝ ճամարտակել, Բարբերին ոչ պահնչացող է միայն՝ այլ և խղճամխտ հետեւող: Նա կը սիրէ լոկ այն արուեստը, որ կը խորշի հնացած համախոհականութեան (conventionalisme), և կամ վաղեմի վարժարանաց դասականութեան (classicisme) գրութեանցմէ, և անոր միայն կը հետեւի և կը զբաղի անով՝ որ կարող է առհասարակ գիտնոց և տգիտաց ընդգիմանալ, լինելով իմաստութեամբ ըմբռնուած ճշմարիտ զգացման պատկերացում մի: Եւ ըստ այսմ՝ նա կ'ուսումնասիրէ զբնութիւն անոր ըստ ամենայն բազմակողմանի գիմաց, նուրբ և յստակ գննութեամբ, պոանց չքննած բան մի թողլու. այն

պէս որ՝ իւր արուեստն պարզապէս արուեստաբար յարմարելուն կամ ճարտարի մի գործիական յաջողակութեան վրայ հիմնուած չէ, և ոչ այլ իմացականութեան խաղ մ'է՝ զուրկ սրտի անձկաւէտ խնամքէ:

Քարբերին կը համարի թէ գեղեցկութիւնն կը կայանայ կենաց լիութիւնի բացատրութեան մէջ. և յիրաւի, ինչպէս արդէն լաւ կ'ըսէ Մ'արեսկոտտին իւր արուեստի փափուկ քննադատութեան մի մէջ, այն հիմնական հանգամանքն՝ որ ի մեզ բերումն կամ խորշումն կը ծնանի արուեստի ներկայացուցած էակի մի վերաբերմամբ, և կը ստիպէ գմբզ մտաւորական յարաբերութեան մէջ մտնել անոր հետ՝ կամ ոչ, նոյն էակին աւելի կամ պակաս կենդանի լինելն է: Արդէն իսկ կենաց ըմբռնումն՝ մեզ կենդանացս համար՝ գրեթէ անհրաժեշտ և մեծապէս շահագրգռող տարր մի դարձած է. և այդ կենդանութեան գազափարը ամենեւին չեմք գտներ այն ձեւակերպական (formalistique) արուեստի մէջ, որ իրին գործիական և նիւթական կողմը միայն մանրամասն կ'ընդօրինակէ, իսկ Ֆարբերին ընդհակառակն՝ իրաց նկարագրական տարրալուծումը՝ կը փոխանակէ անոնց նշանակական համադրութեամբ. և այսու կու տայ առարկային այնպիսի արուեստական ամբողջութիւն, ուր պակաս չէ՝ արտայայտութիւն, շահագրգռող ձիւրք կամ ազդուութիւն և քերթողական աշխոյժ, որ միայն մեծ և ճշմարիտ արուեստի առանձնայատկութիւնք են: Արդ գործելու այսպիսի եղանակ մի՛ դիւրաւ չի ստացուիր, կը յաւելու Գրուբիկու, ոչ իմաստուն հաշուօք և ոչ այլ անցելոյն հմուտ յուշաբերութեամբ, զորս լոկ կարելի է գործածել աստ և անդ, առ սակաւ սակաւ, ընտրողութեամբ և իմաստուն յարմարադրութեամբ: Եւ այս նշանակական համադրութիւնն՝ կամ թէ

լաւ եւս ըսել՝ առարկային իւրաքանչիւր մասանց նշանակութեան համեմատ այս ամբողջական յօդաւորութիւնն, և այս փոխանցումն կենաց առ կուճ՝ յայնժամ միայն կը յաջողի, երբ յառաջ կու գայ՝ արուեստաւորի բովանդակ զգացման և սըրտին ինքնաբուզիս և աննուաճելի ձրկումանէ, որ նման հրաբոխային ժայթքման բնութեան ամբողջական շարժմամբ մի ի դուրս մղուած հոգւոյ խորէն, դեռ անխնայաճանաչ, կը ձգտի ընդլայնել և լինել գիտակից:

Ենթիկոյ Ֆարբերին համար բնութեան գեղեցկութիւնն կախարդիչ հրապոյրք մ'ունի, նա սիրելուն համար կը պարապի այդ արուեստով, և այն մինչև իսկ նորուսի մի տոկունութեամբ և աշխուժով. նորա համար քանդակագործութիւնն քան զայլ ամէն արուեստ ազնուականագոյն է, (զի սա ամենէն աւելի զուրկ է այն յանկարծական մեծամեծ նպաստներէն որ կարող են անմիջապէս ըմբարձակ պարապ մի լեցընել), և կը խորշի անոնցմէ որ արուեստի վրայ չունին պահանջումը բարձր գաղափարը, և իւր սիրուն՝ բնութեան ժայրագոյն գեղեցկութիւնը ճաշակող կամ ըմբռնողի մի յարատեւ զմայլման մէջ գտնուի: Ենթիկոյ դեռ երիտասարդ կ'ընայ ըսուել, և բոտ Յուլիոյ կանապամբասալի ժանրակշիռ խորհրդածութեան՝ ամենայն արժանեօք դասուած է ի համարիտալիոյ կենդանի առաջնակարգ քանդակողաց:

Արուեստի տենդը՝ զոր սա այնպէս ընտիր եղանակաւ գիտէ կուճի փոխանցել, իւր մէջ գրեթէ հոգեկրական բնադրոյժ մի ստացած է, ինչպէս նաեւ միւս ամենուն մէջ՝ որ տաժանելով կ'աշխատին: Եւ որովհետեւ հաստատուն կամք ունի, բնաւ չի լքանիր որեկիցէ դժուար և դիմադրած գործէ: այնպէս որ յաճախ այնչափ աւելի կատարեալ կը լինին արդիւնք՝ որչափ որ դժուարութեամբք կը ստանայ:

Բարբերին իւր այժմ վայելած բու-  
 վանդակ մեծարանքը՝ ի մէջ մշակաց  
 գեղեցկին, ոչ այլոց՝ այլ անձին պէտք  
 է վերագրէ և իւր գործօնեայ և ման-  
 րակրկիտ ջանից. ինչպէս նաեւ այն  
 ընդհանրացող համակրութիւնը առ  
 ինքն, իւր համեստութեան, ընտիր  
 ազնուութեան, ամօթխածութեան և  
 միամտութեան, որ դուցէ յայս եկա-  
 մուտ համարուի, այլ ի սմա յստակ և  
 բնական զեզում մ'է բարեմոյն հոգ-  
 ւոյ: Այսպէս ահա, թէև և նա դասա-  
 խօս է Բոլոնիոյ Գեղարուեստից Ճե-  
 մարանի մէջ, սակայն խօսելու մաս-  
 նաւոր ձեւեր ստացած չէ և ոչ այլ  
 սովոր է վարդապետական պարեգօսն  
 զգենուլ. նա ամենայն պարզութեամբ  
 կը խօսի ձեզ հետ ի մասին իւր ա-  
 բուեստին, իւր խորին ուսումնասի-  
 րութեանց յանդամահատութեան, նը-  
 կատմամբ այն երկրզայից կէտերուն՝  
 որ զինքը կը խռովեն, կամ այն լաւ  
 հանգամանաց՝ որ իրեն սիրտ և յոյս  
 կու տան, ցուցնելով այն դժուարու-  
 թիւնքը որ ընդ առաջ կ'եյնեն՝ որ և  
 է մտաց մէջ ծնած գաղափար մի գա-  
 ճով զանգելու և մարմնաւորելու մէջ:  
 կը խօսի ամենայն բնականութեամբ,  
 սիրով լսելով և պատասխանելով, և  
 այս ամենայն միշտ իւր սեփական կոկ  
 ոճով և յարդարուն բացատրութեամբ:  
 Անձկութեամբ իմն կը փափագի ձեր  
 կարծիքը լսել, կ'աղաչէ որ ամենեւին  
 ակնածութիւն մի չ'ընէք ի զուր, մա-  
 նաւանդ թէ ուզէք ցուցնել իրեն  
 լաւագոյն կերպ մի կամ արդէն գոր-  
 ժուած վրիպակը մատնանիչ ընել,  
 որպէս զի, կ'ընէ, կարենամ ժամանա-  
 կին դարմանն ընել: Եւ ահա ատոր  
 համար, դուք որ տանէն ինն անգամ  
 վար էք և անճաշակ արուեստէն, կը  
 ժպտիք այդ թախանձանաց վրայ և  
 միշտ աւելի եւս կը բերուիք դէպ ի  
 ճարտարն, որ այնքան համեստ է՝ որ-  
 չափ հմուտ. և այսպէս դուրս կ'եյնէք  
 իւր գործարանէն բոլորովին յուզուած

և յափշտակուած, ըսելով դուք ձեզի-  
 Ե՛ղբայր, աս ի՞նչ ընտանի մարդ է:  
 Բարբերի՛ որ այսօրուան օրս կը  
 զբաղի քանդակագործութեան մեծա-  
 մեծ նախօրինակքը պատրաստելու,  
 1892 տարւոյն ամբողջացոյց գործ մի,  
 որ առանց բնաւ չափազանցելու, իւր  
 ամէն մասանց մէջ կատարեալ էր: Եւ  
 նոյն իսկ քննագատութիւնն, որ խիստ  
 դժուարագէպ է, համաձայն գտնուե-  
 ցաւ հասարակաց կարծեաց՝ զինքը  
 մինչև և յերկիրն հանելու. և բովան-  
 դակ մամուլն կը լսեցընէր իրեն՝ ար-  
 ժանավայել ծափահարութեանց գե-  
 ղեցիկ միաձայնութիւնը:  
 Սորա նախորդ բազմաթիւ փոքր  
 գործերէն, որք ամէնքն այլ լաւ գնա-  
 հատուած են, հօս մի քանին յիշենք.  
 Մահարձան Տրալքետտի ընտանեաց,  
 որ կանգնուած է Բոլոնիոյ կարտու-  
 սեան ըսուած եկեղեցւոյն մէջ. Սորք  
 Փրակկիսկոս Աստիացին, անգրին,  
 որ և սա սրբապան երկ մ'է և կը  
 զարդարէ իմոյայ աւանին վեղարա-  
 ւորաց եկեղեցին. դարձեալ՝ Պրոմե-  
 թեա շրքայապիլի ի ժայռ և Ուրիա-  
 դեւ, երկուքն այլ անպատուակ սքան-  
 չելի աշխատութիւնք, որ Բոլոնիոյ Բա-  
 բուզզի մրցարանի մէջ ընտրելագոյն  
 դատուելով՝ պարզեւատրեցան, և այժմ  
 կը գտնուին նոյն Գեղարուեստից Ճե-  
 մարանի մէջ: Բայց գործ մի՛ որ կըր-  
 նայ իրեն Որատիոսին հետ ըսել տալ.  
 «Արձախ է յուզ կանգնեցի քան ըլլազդէն իսկ սուրբ»  
 է, Բիստեգի ընտանեաց մահարձանն՝  
 որ 1892ին մարտէն ի վեր յիշեալ կար-  
 տուսեան տաճարի մէջ զետեղուած է:  
 Բիստեգեայ այրւոյն հաւատքն ու բա-  
 րեպայտութիւնն, կ'ըսէ դասախօս Ալ-  
 բինին, ինդրեցին և ոչ ի զուր՝ Բար-  
 բերինն ամենագեղեցիկ բացատրու-  
 թիւն մի: Հօս ազնուականի մահիճն  
 իւր ամենայն մասամբք կատարելա-  
 գործած և ծածկուած թանկագին կեր-  
 պաստփն՝ որ ճոխաբար ծալ ի ծալ ու  
 տից կողմանէ մինչև ի գետին կ'իջնէ,

կ'ամիտփէ իւր մէջ՝ միանգամայն ծածկելով և ցուցնելով զծերունին որ և յուսով կը մեռանի: Գլուխն բարձի մէջ թաղուած է, գէւկն՝ նուազած, ձեռքն՝ կրծոց վրայ իրարու եկած ծածկոցէն դուրս, և թեբրաբաց բերնին մօտ հրեշտակին աջ ձեռն՝ սոյն միջոցին նորա հոգին կ'ընդունի: Արգէն իսկ հրեշտակն սկսած է վերամբառնալ՝ զոր յայտնի կ'ընէ անոր թեւատարած թեթեւ հակուճն. որ անմերձ յերկիր, դիւրաշարժ, բարձր և ամենանուրբ հանդերձի մէջ պարուրուած, որոյ ծայք՝ թռիկն սկսած լինելով՝ դէպ ի յետակողմն կը հակին:



Ախտեգի ընտանեաց մահարձանն.

և մահարձանի ձախակողմն կեցած՝ կանգուն անձամբ և տարածուն թեւօք ամբողջութիւն գեղազարդող մասն է: Մահճին յալակողմն կ'աղօթէ տիկինն ծնրադիր, որոյ ցաւագին՝ այլ համեստ արտայայտութիւնն, նմանապէս խաղաղ գէւթը՝ առանց զուարթնոյն ժրպտին, լաւ կ'ըմբռնէ այն դիտողն՝ որում անծանօթ չէ բովանդակ գործը

կերպարանաւորող ոգին և այն գաղափարը՝ որով ճարտարն ազդուած է:

Բարբերին որ շատ կը յարգէ ի տարական ԺԳՐՐ գարու արուեստը՝ նորա յստակ աղբուութեան և կորովի երիտասարդութեան համար, կրնայ ուրախ լինել այս իւր գործոյն վրայ, ուր ընդ մէջ իւրաքանչիւր մասանց և յարակից կերպարանաց գեղեցկութեան, առաջին է՝ ըստ որում պէտք ալ էր՝ բովանդակ արուեստական կատարելութեան մէջ, վախճանող մարդոյն կերպարանքը. այնպէս որ հարկ չունի նախանձելու հին արուեստագիտաց այս տեսակ գործոց, Հօս զեղչուած են ամենայն աւելորդք, և շին մոռցուած մինչեւ իսկ շնչին կարեւորք, օրինակ իմն՝ տիկինն մարմարէն անջրպետող բարձիկը:

Այս գործոյն կը յաջորդէ միւս մահարձան՝ որ Բորգի Մամոյ հոյակաւոր երգեցողին համար կոտորած է. և է խաչվէմ՝ մի՛ երկայնութեամբ և լայնութեամբ զարդաձեւ պարուրուած չարչարածաղկով. որոյ բնոյն յենած է հրեշտակ մի՛ ձեռն ի քրնար: Առջեւն աստիճանաց վրայ կենդանագրուած է բարեպաշտուհի սգաւորն անուշակ լքման մէջ, կարծես տարուբերուած ընդ ցաւոց և սգոյ իւր մեռելոց և մխիթարութեանն՝ զոր կ'ազգէ իրեն զուարթուն սաղմոսերգուն: Յիրաւի՛ պարզ և գեղարուեստային գաղափարք. զոր լուրջ և վըստահ բազուկ մի կը փոխանցէ տեւողաբար առ կուճ:

Սակայն այն ծանր և մեծագործ աշխատութիւնն՝ որում նուիրեց Բարբերին, գրեթէ տասնեւութ ամիս իւր մտաց և ձեռաց ամենամեծ գործունէութիւնը, այն մտաւոր վեհ ծնունդն՝ որ շատ իսկ ստիպեց զինքը տժգունիլ և ընդերկար հակել և խոկել հայեցուածքը սեւեռած իմաստնազիժ քարտիսից վրայ, է՛ Քրիստոս մեռնալ ի իսայիս. որ սակաւ ինչ յետոյ պիտի գեւ

տեղուի Բորնիոյ յիշեալ կարտուսեան տաճարին մէջ, Յանձնարարութիւնն եղած է առ Բարբերին կաւազգայ ընտանեացմէ, և շատ շատ գովութիւն կը տրուի ֆելիքս կաւազգայ կոմսին՝ ճարտարի այդ յաշող ընտրութեան համար, որում հաւատաց այդ տխուր և դժուարին գործը: Ոչ զք, կարծեմ, քան զսա աւելի պիտի կարենար ըզգաժուիլ քրիստոնէական ոգւով և քան զայս աւելի գերազանց եղանակաւ մարմնաւորել՝ գերեզմանաց վրայ հրակող կրօնական զգացումը: — Այս հսկայ խաչելութիւնն, մեծ քան զընական, որ այնչափ ժամանակ գրաւեց ճարտարին խոհուն և միանգամայն տժգոհ միտքը, այժմ ահա աւարտած զանգուած է գաճով, և յուղարկուած ի Պարիս՝ տեղւոյն գլխաւոր ձուլարանաց միոյն մէջ՝ մշտագոյն պղընծէ ձուլուելու համար:

Քննադատը հօս կը լռեցընեմք, զանց ընելով թարգմանել նաեւ հետեւեալ երկու էջերը, որ սոյն խաչելութեան մասին խորհրդածութիւնք են յիւրմէ և յայլոց: Ամբողջութեան քաղուածոյ իմաստն է, թէ Բարբերին այդ գործը գլխաւորելու համար՝ փոխանակ ոմանց պէս՝ Ռինան, Ստրաւ և այլ նման գրոց՝ ընտրեց Աւետարանաց անընդհատ ընթերցումը, խառն ընդ պատմական, քննադատական և բնախօսական գրոց. սասնցմէ

զատ քաղքին թանգարանի մէջ գլուխուած գանկաց հաւաքածոյն լաւ ուսումնասիրելով, անոնցմէ երկուքը՝ մին հրէական և միւսն սեմական այլ ցեղի պատկանող՝ իննամով իրար հետ համեմատեց, ջանալով անոնց ամենամանր տարբերութիւնքն այլ ըմբռնել: Այսու ահա կրցաւ ընծայել մեզ խաչելութիւն մի, ուր Աստուածամարդն առած է իւր իսկական սեմական տիպն ու դիմաց դժագրութիւնը, որոյ ցաւագին անուշաւթիւնն յայտնի կ'արտափայլէ աստուածային խաղաղութիւն մի և հայտութիւն:

Շատ կը գովուի ճարտարը ըրած ազնուական գիւտին համար, որով կըրցած է յաշողութեամբ առջեւն առնուլ շատ խաչելութեանց վրայ մեր աչաց անհաճոյ երեւցած դրէցը. նա մարմնոյն միջին մասը՝ լայն կտաւով մի ամփոփ և ամուր խաչափայտին պնդած է, և այսու ամենայն անպատեհութիւն անհետացած: Բարբերիի այդ գործը կրնայ բաղդատուի միայն Հոլբրեքնի խաչելութեան նկարին հետ, որ և նա հասարակաց զբանչանաց առարկայ դարձած է:

Թ. Տոլզի կ'աւարտէ իւր քննադատութիւնը, ներումն խնդրելով ընթերցող հասարակութենէն՝ եթէ չըկրցաւ գովասանքը չափաւորել, որ, կ'ըսէ, ինքնարուզիս սրտէս ի շրթունս կը զեղու:

Պ Ի Ծ Ա Կ Ք

**Ա**ՆԱՍՏԵՂՄԱԿԱՆ ԿԱՐՏԻՔՆԵՐ. — Բանաստեղծք երգած են մեղուաց գովեստները. « առաւօտեան ցօղը ըմպող այս պարկեշտ կենդանեաց » ամենայն տաղանդ և ձիրք ընծայեր են: Ընդհակառակն պիծակաց նկատմամբ շատ խիստ երեցած են, որոց կարծիքն գիւրաւ ընդունելութիւն գտած

է մարդկութեան մէջ: Ըստ այն կարծեաց, որ ժամանակ մը իբր ստոյգ հաւատալի ընդունուած էր, մեղուն « ժիր աշխատաւոր » մի կը համարուի, որ միայն ինքզինքն պաշտպանելու համար կը գործածէ իւր խայթոցը. մինչդեռ պիծակն ծոյլ պատառաբոյծ մի կը նկատուի, որ միայն